



Համարը N 70-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2017.03.20/11(580) Հոդ.135
Ընդունող մարմինը Գյուղատնտեսության նախարար
Ստորագրող մարմինը Գյուղատնտեսության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.03.2017

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 07.03.2017
Ստորագրման ամսաթիվը 07.03.2017
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 13 մարտի 2017 թ.
 Պետական գրանցման թիվ 10617126

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

7 մարտի 2017 թ.

N 70-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների ցանկը հաստատելու մասին» N 268-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 222-րդ, 223-րդ, 224-րդ, 225-րդ, 226-րդ, 227-րդ, 228-րդ, 229-րդ, 230-րդ, 231-րդ, 232-րդ, 233-րդ, 234-րդ, 235-րդ, 236-րդ, 237-րդ, 238-րդ, 239-րդ, 240-րդ և 241-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

222.	Թռչունների Նյու-Քալ և ինֆեկցիոն բրունխիտ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված ԲԻՈ-ՎԱԿ ՆԴՎ6/10-Հ120 (BIO-VAC NDV6/10-H120) պատվաստանյութ	Իտալիա	«Ֆատրո Ս.ս.Ս.» կազմակերպություն
------	--	--------	---------------------------------

223.	Բադերի ինֆեկցիոն հեպատիտ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված Օրնիդակ (ORNIDUCK) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«ԲԻՈՎԵՏԱ Ա.Ս.» կազմակերպություն
224.	Խոշոր եղջերավոր կենդանիների նոդուլյար դերմատիտի թուլացված, կենդանի (LUMPY SKIN Disease) պատվաստանյութ	Հարավային Աֆրիկայի Հանրապետություն	«Օնդեռստեպոռոտ Բիօլոջիկալ Պոռոլուկտս ՍՕՔ Լտդ.» կազմակերպություն
225.	Իմունոֆերմենտային մեթոդով խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի, խոզերի և այլ տեսակի կենդանիների արյան շիճուկում և պլազմայում հակադաբադային ոչ կառուցվածքային սպիտակուցների հակամարմինների հայտնաբերման թեսթ-համակարգ (ID Screen FMD NSP Competition)	Ֆրանսիա	«ԻՐ. Վետ» կազմակերպություն
226.	Խոզերի 2-րդ տիպի ցիրկովիրուս հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ՑիրկոՇիլդ-Վ ինջ. (CircoShield-V inj.) պատվաստանյութ	Կորեա	«Գրին Քրոս Վեթերինարի Փրոդուքթս Բո., Լտդ.» կազմակերպություն
227.	Խոզերի կոլիբակտերիոզ (Escherichia coli) և կլոստրիդիում (Clostridium Perfringens) հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված ԿոլիԿլ (ColiCl) պատվաստանյութ	Կորեա	«Գրին Քրոս Վեթերինարի Փրոդուքթս Բո., Լտդ.» կազմակերպություն
228.	Ծիածանափայլ իշխանի յերսինիոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված Ակվավակ Ռելեռա (Aquavac Relera) պատվաստանյութ	Միացյալ Թագավորություն	«Շերինգ-Պլաու Լիմիտեդ» կազմակերպություն
229.	Ծիածանափայլ իշխանի վիրբիոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված Ակվավակ Վիրբիո Օռալ (Aquavac Vibrio Oral) պատվաստանյութ	Միացյալ Թագավորություն	«Շերինգ-Պլաու Լիմիտեդ» կազմակերպություն
230.	Ծիածանափայլ իշխանի յերսինիոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված Ակվավակ ԵՌՄ Օռալ (Aquavac ERM Oral) պատվաստանյութ	Միացյալ Թագավորություն	«Շերինգ-Պլաու Լիմիտեդ» կազմակերպություն
231.	Թռչունների Նյու-Քասլ ինֆեկցիոն բրոնխիտ, ինֆեկցիոն բուրսալ և ռեովիրուս հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված ԱվիՊրո 431 ՆԴ-ԻԲ-ԲԴ3-ՌԵՕ (AviPro® 431 ND-IB-BD3-REO) պատվաստանյութ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	«Լոնհանն Անիմալ Հելթ Ինտ.» կազմակերպություն
232.	Խոզերի ցիրկովիրուս հիվանդության նկատմամբ ակտիվազրկված ՈՒԲցիրվակ (UBcircvac) պատվաստանյութ	Թայվան	«Յունայթիդ Բիոմեդիկալ Ինկ., Սաիա» կազմակերպություն

233.	2, 5 և 6 շիճուկային տեսակների պլերոպանմո-նիայի ակտինոբացիլով պայմանավորված պլերոպանմոնիայի հետևանքների նվազեցման դեմ խոճկորների ակտիվ իմունիզացման համար Հիոբակ ԱՊՊ Մուլտի Վետ. (Hyobac APP Multi Vet.) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«ԲԻՈՎԵՏԱ Ա.Ս.» կազմակերպություն
234.	Թոչունների Նյու-Քասլ, ինֆեկցիոն բուրսալ և Մարեկ հիվանդությունների նկատմամբ Իննովաքս ՆԴ-ԻԲԴ (Innovax ND-IBD) պատվաստանյութ	Նիդերլանդներ	«Ինտերվետ Ինտերնեյշնլ Բ.Վ.» կազմակերպություն
235.	Կոլիբացիլեոզ (դիարեա), նորածին խոճկորների նեկրոտիկ էնտերիտի և Կլոստրիդիում Նովի (Clostridium Novi) տեսակի բակտերիաների ազդեցության հետևանքով խոզամայրերի հանկարծամահության նկատմամբ մուլտիվալենտ Սուիսենգ (SUISENG) պատվաստանյութ	Իսպանիա	«Լաբորատորիոս Հիպրա, Ս.Ա.» կազմակերպություն
236.	Թոչունների Նյու Քասլ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված «Նոբիլիս ՆԴ Բրոյլեր» (Nobilis ND Broiler) պատվաստանյութ	Նիդերլանդներ	«Ինտերվետ Ինտերնեյշնլ Բ.Վ.» կազմակերպություն
237.	Մանր և խոշոր եղջերավոր անասունների Clostridium հիվանդությունների դեմ համակցված Մուլտիքլոս (MULTICLOS) պատվաստանյութ	Հարավային Աֆրիկա	«Ինտերվետ Ս.Ա. (Pty) Լտդ.» կազմակերպություն
238.	«Ա» տիպի իմունոֆերմենտային անալիզի միջոցով կենդանիների արյան շիճուկում հակադարձադային հակամարմինների հայտնաբերման թեսթ-համակարգ	Հայաստանի Հանրապետություն	«ԱՐ ԲԻՈՏԵՍ» կազմակերպություն
239.	«Օ» տիպի իմունոֆերմենտային անալիզի միջոցով կենդանիների արյան շիճուկում հակադարձադային հակամարմինների հայտնաբերման թեսթ-համակարգ	Հայաստանի Հանրապետություն	«ԱՐ ԲԻՈՏԵՍ» կազմակերպություն
240.	«Սաիա-1» տիպի իմունոֆերմենտային անալիզի միջոցով կենդանիների արյան շիճուկում հակադարձադային հակամարմինների հայտնաբերման թեսթ-համակարգ	Հայաստանի Հանրապետություն	«ԱՐ ԲԻՈՏԵՍ» կազմակերպություն
241.	«3ABC» տիպի իմունոֆերմենտային անալիզի միջոցով կենդանիների արյան շիճուկում հակադարձադային հակամարմինների հայտնաբերման թեսթ-համակարգ	Հայաստանի Հանրապետություն	«ԱՐ ԲԻՈՏԵՍ» կազմակերպություն

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Ի. Առաքելյան